

Լանդշաֆտի կոնվենցիա. Կրթական բաղադրիչ

Մանկավարժական գրքույկի շնորհանդես

«Լանդշաֆտային կրթական գործունեություն տարրական դպրոցների համար»

Չարգելի ներկաներ ...

Ողջունում եմ Ձեզ մեր համալսարանում և շատ կարևորում եմ այսօրվա միջոցառման նպատակները ու ուղղվածությունը:

Այսօր «Լանդշաֆտ» հասկացությունը ամենաընդգրկուն և ամենակարևոր բաղադրիչներից մեկն է երկրագնդի բնակչության առողջ կենսագործունեության կազմակերպման գործում: «Լանդշաֆտային բաղադրիչի» պահպանման խնդիրը տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի զարգացման համար դիտարկվում է որպես առաջնային գործոն:

Մասնավորապես, լանդշաֆտային բաղադրիչի պահպանումը որպես առաջնային սկզբունք հռչակելու և հիմնականում վերականգնվող բնական ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման պարագայում է միայն հնարավոր ապահովել Եվրոպական երկրների կայուն տնտեսական զարգացումը, բացառիկ բնական հարստության պահպանումը ու հզորացումը:

Ներկայումս միջազգային մակարդակներում աշխատանքներ են տարվում կայուն զարգացմանը նպատակուղղված համատեղ գործիքակազմերի ձևավորման ուղղությամբ: Այս նպատակին հասնելու համար Եվրոպական Միության երկրները փաստորեն, արդեն միավորել են իրենց ջանքերը՝ ստորագրելով կամ վավերացնելով Եվրոպական Լանդշաֆտային Կոնվենցիան, որի նպատակն է նպաստել լանդշաֆտների պահպանությանը, կառավարմանը, ռացիոնալ պլանավորմանը, և անդշաֆտային խնդիրների շուրջ կազմակերպել Եվրոպական համագործակցություն:

Նրանք ակտիվորեն ձևավորում և իրականացնում են իրենց ազգային լանդշաֆտային քաղաքականությունը կամ դրա առանձին ուղղությունները՝ ներառյալ օրենսդրական, գիտական, կրթական և գործնական բաղադրիչները: Յետևաբար, շատ կարևորվում է նաև ոլորտային մասնագետների համապատասխան կրթությունը և շարունակական վերապատրաստումը: Եվ առավել քան կարևոր է վերոհիշյալ մոտեցումների ներդրումը արդեն իսկ դպրոցական տարիքից: Մատաղ սերունդը մեր երկրի ապագան է ու պատասխանատուն, և մենք պարտավորենք այսօրվանից դաստիարակել մեր երկրի քաղաքացիներին որպես քաղաքիրթ միջավայր կերտողների:

Ուզում եմ կրկին ոջունել Ձեզ մեր համալսարանում և մաղթել բեղմնավոր աշխատանքային օրեր:

сторико-культурного и природного наследия Европы [1].